

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՍՏՆԵԱՑ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Վ Ր Ա Ց

(Տես Հաս. ԽԱ. էջ 50, 155, 209. ԽԲ, 18, 110, 240):

ԳԼՈՒԽ ԺԶ

Սկիզբն ֆադրական ազգին, որ և Մարակի-
նոսք, և տիրել ևոցա աշխարհին Պարսից. —
վկայական կատարումն Արշիլ Երկրորդի, ար-
քային վրաց. — Ապատակութիւն Խաչակին
Խաչոսցոց 'ի վիրս, և կատարած Շուշանայ՝
ցատեր Արշիլ Երկրորդի. — Մահ որպոչ Արշիլ
Երկրորդի, և արյաւանք Քուշկասիմ Մարակի-
նասի 'ի Հայս և 'ի վիրս, և վկայական մահ Սյւ-
բատայ Խոստովանողի:

Բայց ոչ ոք կարէ զաղէտս քրիստո-
նէից ընդ գրով արկանել՝ զոր կրեցին
'ի Սարակինոսացն, որք առժամանակ
մի և Քաղըթակաճք կոչեցան. զոր ասէ
իսկ աստուածային Գիրք, եթէ Քաղըր-
թայ լեզուքն արբեսցին յարենէ անմե-
ղաց, ֆանգի սկիզբն զորանալոյ ազգին
Քաղըթն եղև, որ էր իշխան սակաւ
իսմայելականաց յըջանակաց: Յորոյ
աւուրս իշխան ոմն Միջագետաց Սար-
գիս անուն՝ յախշտակէր զինչս վաճա-
ռականաց իսմայելացոցն. և Քաղըթն
սղբանաք Տայցեայ զառեալն, և զի այլ
մի արասցէ զայն. և նա ոչ լսէր նմա:
Որոյ սրտառեալ ժողովէ ամբոխ յոյժ
յիւրոցն, և երթեալ առնուն զիւրեանցն
և զնոցայն, և ոյժ առեալ զորացան՝,
Եւ 'ի նոյն աւուր գտան զՄահմէտ՝ հա-
լածեալ յիւրոցն. որ էր յաղկերտեալ
Արիանոսի ումնն մինողորն և կերին.
Թոսի ազանդոյն, որ ախաաւորաբար և
մարմնաւորաբար և մարմնաւոր ցան-
կութեամբ դաւանէր զյարութիւնն:
Ճնա յարուցեալ առ իւրեանս և արա-
րեալ զորագլուխ, կռուեցան ընդ ամե.

նայն երկիր, 'ի ընու մեզացն չափոյ
քրիստոնէից՝ Յունաց և Հայոց, Ասորոց
և Ալուանից և Վրաց. որովք ճոխա-
ցեալ՝ առին և զՊարսից գաւազանն
յիւրեանն, որով հարկեն իսկ զազս
ամենայն:

Արդ՝ զկնի երկոտասան ամաց դնա-
լոյ խուլ ամիրային, եկն ճիճնաւում,
որդի Մահագիւոյ. և արք երևելիք ընդ-
դէմ՝ զարձան նմա, և ոչ թողին 'ի կլար-
ճէթ. և ոմանք 'ի նոցանէ գնացին յեր-
կիրն Տայոց, և գտին քար մի, և շինե-
ցին զնա ամրոց, և կոչեցին զնա կա-
մախ: Իսկ թագաւորն Արշիլ խորհե-
ցաւ զնալ առ բռնաւորն, թերևս գիւ-
րութիւն առնէ քրիստոնէից, քանզի
ընդ հարկաւ իսկ էին նոցա: Եւ իբրև
չողաւ՝ ել ընդ առաջ նորա և մեծա-
րաց զնա, և գովեաց զդեղ երեսաց
նորա և զվայելութիւն հասակի նորա,
և որար նմա խրախուժիւն: Եւ զկնի
սակաւ աւուրց՝ հարկէր զնա դառնալ
'ի դենս նոցա. և խոշորագոյնս լուա 'ի
նմանէ պատասխանի. և հրամայեաց
բռնաւորն զնել յերկաթս: Եւ առաջ մա-
տեաւ ապա իշխան մի ուրացող՝ Գար-
գամբէլ անուն, և ասէ ցճիճնամ, որ և
կոչէրն Ասիմ՝. Յազգէ մեծ թագաւո-
րաց է դա, և տէր գանձուց պատուա-
կանաց, և է ընդ ձեռամբ դորա և գանձ
կայսերն Յունաց: Եւ յորժամ լուա
զայս՝ և ուրախ եղև. և կոչեցեալ զնա
յատեան՝ ասէ. Յոյց ինձ զգանձն կայ-
սեր և զնախնեանցն քոց, և դարձիր 'ի
կրօնս իմ, և զքոյն քեզ շնորհեցից, և
կալ զիշխանութիւն քո, և արարից

1 Օրինակն Պրոսէի փոխանակ ոյժ ասեալ զՊ-
րացանի՝ զնէ, և կոտորեցին զնոսս իսպառ:
2 Երբինակն՝ կոչիր նա Սիմ, զոր Պրոսէ ըն.

Թեոնու կոչիր Նասիմ, այլ ըստ վախճանագայ
և ըստ ֆոզու ստորև ուղղագիր կայանն՝ Ասիմ
լինել ստուգի անուն բռնաւորին:

զըեղ սպասալար տմենայն փարթլայ: Ետ պատասխանի Արչիլ, և ասէ. Յորժամ էանց ընդ երկիրս մեր Հերակլ տղայ էի ես. և զգանձն զոր պահեցին՝ կայ 'ի գղեակ բերդին, ուստի դարձաւ խուլ ամիրայն, զոր այժմ ունին Յոյնք, և յիմ՝ ձեռն ոչ է եկեալ զոր խնդրեան. և զհաւատս իմ՝ ոչ փոխեմ՝ ամենայն տիեզերաց, զի տէր Աստուած իմ՝ ֆրիստոս է, Որդին Աստուծոյ կենդանոյ: Եւ հայեցեալ 'ի նա բռնաւորն՝ ասէ. Դո՛ւ հարեր զՍարակինոսս յԱփխագեթի: Արչիլն ասէ. Ես անդ էի՛ յորժամ եհար զնոսս Աստուած: Ասիմ ասաց. Աստուած՝ եհար զմեզ: Ասէ Սուրբն. Այո՛, ֆրիստոս Աստուած՝ յոյն մեր, որ եկն յերկիր փրկել զմեզ, նա օգնեաց յուսացելոց իւրոց: Յայնժամ հրաման ետ բռնաւորն 'ի վերայ պատուական թագաւորին, և ասէ. Որոյ Աստուածն մեռեալ է՝ մեռցի և դա յանուն նորա՝ զոր ընտրեացն: Եւ հանեալ արտաքս՝ գլխատեցին զնա 'ի գոհանալն և 'ի յաղօթելն առ Աստուած. որ և փոխանակեաց զմահականացու թագաւորութիւնն ընդ անթնաւամ արքայութեան երկնաւորի, զվկայիցն առեալ զպսակ՝ կայ առաջի սրբոյ Երրորդութեանն յանտրտում ուրախութիւնն: Եւ եկեալ 'ի գիշերի Գողերձեցիքն և Տրեցիքն և այլ ազատք ընդ նոսա՝ և գոզացան զմարմին նորա, և տարեալ թաղեցին 'ի Նուտկարա՝ յիւր շինեալ եկեղեցի: Եւ կին նորա ետ պարգևս բերողաց նշխարացն, և գիւղս և աւանս՝ 'ի հանգստարանն նորա: Եւ զըտաւ՝ պատմութիւնս համառօտ՝ 'ի ժամանակս շիրիմանն, և եղաւ 'ի դիրքս՝ որ կոչի ֆարթլիս Յիսորէպա, որ

է՛ Պատմութիւն ֆարթլայ. և եգիտ ըզսա Զուանբեր, գրեալ մինչև ցվախթանդ թագաւոր, և մինչև ցայսլայր ինքն՝ յաւել Զուանբեր, և զգալոյն՝ յանձնեաց տեսողացն և պատահեցոցն 'ի ժամանակին:

Սրբ՝ վկայն ֆրիստոսի Արչիլն եթող երկու որդիս՝ զԶուանբեր և զԻւանէ՛, և դասերը չորք, որոց անուանքն՝ Գորանդուխտ, Մարիամ, Միհրանդուխտ և Շուշան: Զայս Շուշանայ լուաւ արքայն խաղրաց՝ եթէ գեղեցիկ է, առաքեաց խնդրեաց իւր 'ի կնութիւն. և խոստանայր թափել զերկիրն նորա 'ի ձեռացն ֆաղրթաց: Եւ ոչ կամեցան տալ զգառն՝ զազանին՝ մայրն և եղբարքն: Եւ զկնի երկոց ամաց արձակեաց խաբանն զԲուլան սպասալարն իւր ծանր զօրու՝ ընդ ճանապարհն լեկեթոյ. որ և եկն և անցաւ 'ի Կախէթ, և պատեաց զբերդն՝ ուր կայր Զուանբեր և Շուշան: Եւ զկնի սակաւուց էառ և զՏփխիս և զամենայն երկիրն ֆարթլայ, և զնայ՝՝: Եւ սուրբն Շուշան ասէ ցեղաբայրն. Մեռայց կուսութեամբ մարմնոյս և հաւատոյս, և մի գազանա կուր եղէց: Եւ հանեալ զմատանին՝ 'ի բաց էառ զակն պատուական. և կայր 'ի ներքոյ նորա դեղ մահու. ընկէց ըզնա՝ 'ի բերան իւր, և մեռաւ անարատ առաջի Տեառն՝ և թաղեաց զնա եղբայրն իւր: Եւ իբրև դարձաւ Բուլան առ խաբանն և պատմեաց վասն կուսին, բարկացաւ յոյժ՝ զի ոչ պահեաց զնա զգուշութեամբ, և ոչ տարաւ գոնեա զգի նորա առ նա. և աղոյց խառան 'ի պարանոցն, և երկուց հեծելոց հրամայեաց առ միմեանս ձգել, մինչև հատաւ զլուխն չար, ապականիցն սուրբ եկեղեցւոյ: Եւ զկնի եթին ամի արձա.

1 Պրոսէ զգտան ընտրէ ընթեանը գրեցաւ, անհամաձայն և ընդ Վախթանգայ:
 2 Քառասներորդ հինգերորդ արքայութիւն, Խոսրովունէք. կացին յշխանութեանն ամս 69, 'ի 718-787:
 3 Այս վերջին նախադասութիւն պակասի 'ի թարգմանութեանն Պրոսէի:
 4 Եթէ ոչ առանձինն իմն և գազանի աղբէջութիւն համարիցեմք լեալ 'ի Տեառնէ առ

Շուշան՝ վասն զեղաւութեանն, յորմէ և մահուանձինն, կարծեմ գժուարին լիցի արգարացուցանել զայն՝ ըստ քրիստոնէական ուղղութեանց. վասն որոց և զՇուշանս զայս, զոր սըբբուհի կողմամբ պատուէ մատենագիրն, կարգէ լի իցէ անշուշա՝ 'ի շարս կարի յոյժ սակաւուցն այնպիսի 'ի սրբոց, որոց նմանօրինակ եղին կատարած կենաց:

կեցաւ Ջուանբեր պարզեզը, և եկն յերկիր իւր. և եզիտ զՍարակինոսան 'ի Տփխիս և 'ի բազում անդիտ բանակ հարեալ. և ինքն հնազանդեալ հարկեցաւ նոցա, առեալ կին՝ զչուստր Աւարընբեհհի Բագրատունւոյ, որ կոչէր Լատրիի:

Չկնի ժամանակաց եկն Խոսրոյդիս, որ ստիկան էր Հայոց, և շինեաց ըզ-Տփխիս՝ զաւերեայն խազրաց: Իսկ Լէոն ունն՝ որդի դստեր թագաւորին խազրաց, թագ եղեալ ունէր զԱփխազէթ և զԵգրիս, մինչև զԼիկոս: Եւ մտան որ զԻքն Արչլին՝ իւանէ և Ջուանբեր. և կալաւ զտեղի նորա Կիւրապաղաան Աշոտ՝. և մեծարեաց զնա կայսրն, զի տկարացան Տագարացիքն: Իսկ Չկնի մահուան Լևոնի՝ կալաւ զտեղի նորա Թէոդոս որդի նորա: Չկնի աւուրց եկն խալիլ ամիրայն, և սպան զԱշոտ, և ինքըն սպանաւ 'ի Ջուախնթի: Չկնի երկերիւր լինն և տամն ամաց՝ առաջին Մահմետի, եկն Բուղայն, և վշտայոցց Կերկիրն Հայոց. և հասեալ 'ի Տփխիս՝ սպան զՍահակ ամիրայն՝, զի ոչ հրնազանդէր նմա. և երթեալ 'ի Մթխելէթ՝ էտո 'ի նոցանէ պատանդս երկըհարիւր. և կամեցաւ մտանել յՍսէթ. և կալաւ զնա ձիւն ստստիկ, և կորեան բազումք. բայց ոչ ինչ զրէկն զՋիւանն 'ի բազմութենէն՝ որ մնացեալն լինէր՝ իբրև հարիւր և քսան հազարաց, Դարձաւ 'ի Բաղտատ՝՝ ձմերել անդ. և 'ի գալ զարնայնոյն՝ եկն 'ի Դարբանդ, և բացեալ զԻուոն՝ եհան անտի երեք հարիւր տուն, և բնակեցոյց 'ի Շամբոր՝

խազրեցիս. և եհան 'ի Դարբալոյ հարիւր Օսա, և բնակեցոյց 'ի Դամանիս:

Յայնմ ժամանակի Գիորգի թագաւորն Ափխազաց և Դեմետրէ փեռայն՝ Լեւոնի՝ ելին և կալան զՔարթլ. էառ և Լիպարիտ զԹոռնո, և շինեաց զԿիւտէկար, և ժառանգեցոյց զԴաւիթ՝՝ որ գի Բաղրատայ, 'ի ժամանակ Սմբատայ՝ Հայոց արքայի տիեզերակալի՝, որ մարտ եղեալ ընդ Կոստանդեայ՝ թագաւորին Ափխազաց՝ էառ զՔարթլը և զՈւփլոսցիւն. և զարձեալ հաշտեալ ինամիք եղեն, և դարձոյց անզրէն: Յաւուրսն յայնտիկ եկն Բուլկասիմ՝ զօրապետն Սարակինոսաց՝ 'ի Հայս, և ապա 'ի Տփխիս, և անդի յՈւլարմոյ բերդն, և էառ զնա: Եւ Կոյրիկէ քորեպիսկոպոսն եկն առ նա, և սիրեցաւ 'ի նմանէ, և դարձաւ անդէն՝ 'ի Դուին: Եւ Սմբատ արքայն Հայոց խոյս ետ 'ի նմանէ, և եկն շրջէր 'ի Լերինս Ափխազէթայ. իսկ բռնաւորն սպասէր նմա, քանզի պերճացեալ էր յաղթութեամբն վրաց. քանզի առեալ էր զամենայն Քարթլ, և յուլմ բերդս, զԹմօք և ըզԽոռիլս, յորում եսպան զԵգրեցիկ և զբաջ մանուկն Գօրուն՝ վասն Քրիստոսի, զի ոչ ուրացաւ զնա, զորոյ վկայութիւնն գրեաց սուրբ հայրն մեր Ստեփանոս վկայեաց և սուրբ թագաւորն Սմբատ՝ 'ի նոյն բռնաւորէն, 'ի Դուին քաղաքի. բոլոր տարի մի չարչարեալ, և ապա խեղդամահ սպանին և կախեցին զվկայաէ, զի մահակից և խաչակից լիցի Քրիստոսի:

Շարունակելի:

1 Քառասներորդ վեցերորդ իշխան, կիրաւ պաղտա բաղրատունի, եկաց 'ի վարդութեանն ամս 39, 'ի 787-826:

2 Սահակ այս՝ որդի Իմայելի կոչեցեալ 'ի Ախիթանդայ կոչեալ էր ամիրայ Տփղեաց ըզկնի Ալէի՝ որբւոյ Շուաբայ՝ կարգելոյ 'ի Թալիլ ամիրայէ, որ յերթորդում անգ նուագի արշաւանացն՝ յառուրս Սահակայ ամիրայի սպանաւ 'ի Ջուախնթ: Մոհմեա որդի նորին՝ 'ի գալ իւրում՝ 'ի Վիրս՝ միաբանեցաւ ընդ Բաղրատայ՝ որբւոյ Աշոտոյ կիրապաղաանի, որ և ընկալաւ 'ի Մոհմեայ զԻւսանութիւն վրաց աշխարհին, և եկաց քառասներորդ եօթնի որդի 'ի կարգի իշ.

խոզանի, կիրապաղտ կոչմամբ, և տեւաց 'ի վարդութեանն զամս 50, 'ի 826-876:

3 Վահթանդ և Ասողիկ փոխանակ Բաղրատայ՝ ունին Բարտա, որ է Պարտաւ:

4 'Ի Տեւարէ ոչ էր փեռայ, այլ որդի Լեւոնի Երկերորդի արքային Ափխազաց և եղբայր Գիորգեայ և Թէոդոսի:

5 Քառասներորդ ութերորդ արքայ, բագրատունի, իշխեաց 5 ամ, 'ի 876-881: Յետ սորա իշխեաց որդի իւր Արշնաս. քառասներորդ իններորդ արքայ, զամս 42, 'ի 881-923:

6 Պասափա չիօթի աստուտ զՆոստոպանոյն Սմբատ ընդ Տիեզերակալին: